

ԿԵՍԱՐԱՑԻ ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ ՊԱՏՐԻԱՐԲ

(1607 — 1609)

Կ. Պոլսոյ հայութիւնը այդ թուականին կ'ապրէր խառնակութեան մը մէջ: Ճելալիներու ապստամբութեան հետեանօք բոլոր ներքին գաւառներու բնակչութիւնը՝ ապաստանած էր կեանքի ապահովութեան համար Կ. Պոլիս և անոր շուրջը:

Դարանաղցի, որ մէկն է անոնց, որ իր բնիկ գաւառին բնակչութեան հետ Կ. Պոլիս և անոր շուրջը ապաստանող բազմութիւններու հետ այս կողմերը ինկած և անոնց հետ զբաղած է, շատ մանրամասն նկարագրած է այն տառապանքները՝ զոր այս առթիւ կրած է ժողովուրդը: Միայն թէ ինքն թիւերու ճշգրտութեան և կանոնաւոր դասաւորութեան մը խնամք տարած չըլլալով իր ժամանակագրութեան մէջ, կարելի չէ պայծառ եզրակացութիւններ հանել իր գրածներէն:

Շատ որոշ կը տեսնուի սակայն՝ թէ իր օրերուն Կ. Պոլիս խոնուող գաղթականներուն և բնիկներուն միջև մեծ վէճ ու պայքար կար, որուն ինքն ալ իբր գաւառնե-